# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## «ՀՌՀ-ԷԱՃԾՁԲ-19/2-2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **05.12.2018 թ.**
**Ժամը 11:00**

***«ՀՌՀ-ԷԱՃԾՁԲ-19/2-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.***

**1. *Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.***

«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲ ընկերության կողմից էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգին ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**2. *Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացվող պահանջները.***

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲ ընկերությունը հանձնաժողովին է ներկայացրել իր գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**3. *Ներկայացված փաստաթղթերի համապատասխանության գնահատումը, գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը.***

Հանձնաժողովը բավարար է գնահատել 2-րդ կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**4. *«ՀՌՀ-ԷԱՃԾՁԲ-19/2-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հրապարակում.***

Հանձնաժողովը որոշեց՝ ընտրված մասնակից ճանաչել «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲ ընկերությանը և պայմանագիր կնքելու նպատակով առաջարկել ծանուցվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետը 10 (տասը) օրացուցային օր է:

Ընտրված մասնակցի հետ կարող է կնքվել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 36-րդ հոդվածի և մրցույթի հրավերում նշված պահանջներին համապատասխան գնման պայմանագրի գնի 10%-ի չափով պայմանագրի կատարման ապահովումը տուժանքի կամ կանխիկ փողի ձևով ներկայացնելու դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

***5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.***

**Հանձնաժողովի նախագահ՝**

ՀՌՀ իրավաբանական և լիցենզավորման վարչության պետ — Դ. Մարգարյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**

ՀՌՀ գործերի կառավարչության գլխավոր մասնագետ, գնումները համակարգող — Ա. Մատինյան

**Հանձնաժողովի անդամներ՝**

ՀՌՀ իրավական ապահովման բաժնի պետ — Ա. Ներսիսյան

ՀՌՀ ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության պետի տեղակալ — Լ. Շահբազյան

ՀՌՀ միջ. կապերի, զարգացման տեղեկատվության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ — Գ. Դարբինյան

ՀՌՀ անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ — Է. Գրիգորյան